ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

6 մայիսի 2011թ. **N-- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետի դրույթները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 217.6քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը տրամադրել <<Ռադիո Հայ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը։

2) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 107.7քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը տրամադրել <<Առկա>> լրատվական գործակալություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը։

3) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 498.7քմ և 5-րդ հարկի 74.8քմ և մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությանը։

4) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 33.5քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը։

5) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Ռոսիա>> հասարակական կազմակերպությանը։

6) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա> հասարակական կազմակերպությանը։

7) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9մ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Հայելի ակումբ>> ժողովրդական աջակցության հասարակական կազմակերպությանը։

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա <<Ռադիո Հայ>> և <<Առկա>> լրատվական գործակալություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին պայմանագրերը կնքել՝ նույն շենքում ընկերությունների կողմից նախկինում զբաղեցրած տարածքներն ազատելուց և դրանց նկատմամբ իրավունքները դադարելուց հետո։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի Երևան համայնքի անվամբ համայնքային սեփականության իրավունքը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 9-ի <<Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին>> հ.604-Ն որոշման հիման վրա։

Հայաստանի Հանրապետության կառավարության 26.12.2001 թվականի <<Տարածքներ տրամադրելու մասին>> հ.1322 և Հայաստանի Հանրապետության կառավարության 07.09.2006 թվականի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 26-ի N1322 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> հ.1279-Ա որոշումների համաձայն՝ Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկի 198.0քմ և 103.0քմ մակերեսով տարածքները համապատասխանաբար տրամադրվել են <<Ռադիո Հայ>> և <<Առկա>> լրատվական գործակալություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տարածքները ներկայումս անհրաժեշտ են Երևան համայնքի կարիքների համար, նշված ընկերություններին ծանուցվել է ազատել վերոգրյալ տարածքները և փոխարենը առաջարկվել է <<Ռադիո Հայ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տարածք նույն շենքի 3-րդ հարկում՝ 217.6քմ մակերեսով, իսկ <<Առկա>> լրատվական գործակալություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 107.7 քմ՝ Փ. Բուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկում։

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի հ.640-Ա որոշման՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 494.5 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությանը, սակայն նշված տարածքը ներկայումս անհրաժեշտ է Երևան համայնքի կարիքների համար, որի հետ կապված առաջարկվում է գործակալությանը տրամադրել նույն շենքի 3-րդ հարկում՝ 498.7քմ և 5-րդ հարկում՝ 74.8քմ մակերեսով տարածքներ։

Համաձայն ՀՀ Նախագահի աշխատակազմի <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության գրության՝ աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով կազմակերպությանն անհրաժեշտ է տարածք՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում, որի հետ կապված առաջարկվում է շենքի 4-րդ հարկի 33.5քմ

մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով՝ 2 տարի ժամկետով տրամադրել վերոնշյալ <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը։

<<Ռոսիա>> հասարակական կազմակերպությունը ևս դիմել է Երևանի քաղաքապետարան՝ իրեն Փ. Բուզանդի շենքում տարածք տրամադրելու խնդրանքով։ Հաշվի առնելով <<Ռոսիա>> հասարակական կազմակերպության նեդրումը Հանրապետության ռուս բնակչության սոցիալական, բժշկական, հոգեբանական, մշակութային և կրթական կյանքում՝ առաջարկվում է Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Ռոսիա>> հասարակական կազմակերպությանը։

Հաշվի առնելով <<Հայելի ակումբ>> ժողովրդական աջակցության հասարակական կազմակերպության բազմամյա փորձը և ներդրումը հայաստանյան մամուլի բնագավառում, և բավարարելով կազմակերպության գրությամբ ներկայացված խնդրանքը՝ առաջարկվում է Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Հայելի ակումբ>> ժողովրդական աջակցության հասարակական կազմակերպությանը։

Նաև, հաշվի առնելով <<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության ներդրումը դպրոցական տարիքի երեխաների, երիտասարդների և մեծահասկաների շրջանում ուկրաիներեն լեզվի ուսուցման մեջ, առաջարկվում է Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել <<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու << Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ